Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
օգոստոսի 31-ի N 96 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

Երևանի 2800-ամյակին նվիրված՝ ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի հետնամասում գտնվող՝ Իտալիայի, Բեյրութի, Մ. Խորենացու և Գ. Լուսավորչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգման և հիմնանորոգման

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի հետնամասում գտնվող՝ Իտալիայի, Բեյրութի, Մ. Խորենացու և Գ. Լուսավորչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի հետնամասում գտնվող՝ Իտալիայի, Բեյրութի, Մ. Խորենացու և Գ. Լուսավորչի փողոցների սահմաններում պարփակված այգի Բնագավառը՝ քաղաքաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	2 430 000 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևանի համայնք Ընտրությունը կատարվել է՝ համաձայն բարեգործությունը ստացողի աջակցության խնդրանքի:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թվականի հունվարի 8-ից մինչև 2018 թ. դեկտեմբերի 1-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Զբոսայգու նախագծում - 30 000 000 դրամ (այդ թվում՝ ավարտված 26 688 807 դրամ աշխատանքներ). Զբոսայգու շինարարական աշխատանքներ-1 100 000 000 դրամ (այդ թվում՝ ավարտված 362 274 095 դրամի աշխատանքներ). Զբոսայգու կանաչապատում 30 000 000 դրամ. Շատրվանների կառուցում և վերանորոգում - 900 000 000 դրամ. Զբոսայգու կահավորում և այդ այգու համար նախատեսված պարագաներով հագեցում - 370 000 000 դրամ (այդ թվում՝ ձեռք բերված 18 217 500 դրամի ապրանքներ). Միջոցառումների ընդհանուր արժեքը կազմում է 2 430 000 000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2018 թ. հունվարի 8-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է նախագծման ծառայությունների ձեռք բերում՝ 30 000 000 դրամ. Շինարարական աշխատանքների իրականացման համար ծառայությունների ձեռք բերում՝ 1 100 000 000 դրամ. Զբոսայգու կանաչապատման ծառայությունների ձեռք բերում՝ 30 000 000 դրամ. Շատրվանների համար սարքերի, սարքավորումների, պարագաների ձեռք բերում և ներմուծում - 900 000 000 դրամ. Այգու համար նախատեսված պարագաների ձեռք բերում և ներմուծում - 370 000 000 դրամ. Ձեռք բերվող ծառայությունների ու ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 2 430 000 000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ